ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/220

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Լուսակերտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լուսակերտ» ՍՊԸ -ի ներկայացուցիչ՝ Ս. Մանուկյանի, Տ. Մուրադյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի և կենդանիների կերի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14229-2020 գրությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2923-2020 գրության հիման վրա, 22.09.2020թ.-ին «Լուսակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 22.09.2020թ.-ին:

22.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/220 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին, 16.10.2020թ.-ին և 22.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2923-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Լուսակերտ» ՍՊ ընկերության միջև 25.12.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/10-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. սեպտեմբերի 11-ին միակողմանի մասնակի լուծել է ԳՀԱՊՁԲ-20-7/10-3 գնման պայմանագիրը և դրան կից՝ 19.06.2020թ. կնքված համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 2020թ. սեպտեմբերի 16-ին հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/10» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լուսակերտ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Լուսակերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Լուսակերտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14229-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

30.08.2020թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատճառաբանելով, որ «Լուսակերտ» ՍՊ ընկերությունը խախտել է 25.12.2019թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-20-7/10-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որպեսզի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնվի «Լուսակերտ» ՍՊ ընկերության նկատմամբ:

Հայտնում եմ Ձեզ, որ «Լուսակերտ» ՍՊ ընկերությունը 25.12.2019թ. N ԳՀԱՊՁԲ-20-7/10-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի խախտում թույլ չի տվել, ճիշտ ժամանակին մատակարարել է պատշաճ որակի և քանակի ապրանքը հավի ձուն, որը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ընդունվել, պատճառաբանությամբ, որ ապրանքը բնութագրող տվյալները արկղերի վրա փակցված են եղել սոսնձված թղթերով, սակայն պետք է լինեին տպագրված: Միայն դա է եղել պատճառը, որ ժամանակին և ճիշտ վայրում մատակարարված ապրանքը չի ընդունվել, որևէ այլ պատճառ, այդ թվում ժամկետի խախտման վերաբերյալ չի եղել:

25.12.2019թ. N ԳՀԱՊՁԲ-20-7/10-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավել:

Ապրանքի վերաբերյալ տվյալներն արկղերի վրա սոսնձված լինելու հանգամանքը պայմանագրի էական խախտում չի հանդիսացել, ավելին սոսնձումն այնպես է եղել, որ հնարավոր չէր այն վերացնել առանց արկղը վնասելու: Տվյալներն արկղերի վրա սոսնձելուց հետո նաև կնքվել են: Այդ ամենից հետևում է, որ «Լուսակերտ» ՍՊ ընկերությունը որևէ ձևով ապրանքի մատակարարման ժամկետի խախտում թույլ չի տվել: Նման պայմաններում պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի խախտման հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեպքում «Լուսակերտ» ՍՊԸ-ն ստիպված է լինելու դիմել դատական պաշտպանության և այս հարցը բարձրացնել այլ հարթակներում:

Վերը նշվածից ելնելով խնդրում եմ՝

- *իրականացնել ամբողջական հետազոտություն և պարզել, որ «Լուսակերտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում մատակարարել է հավի ձուն, սակայն ժամկետի խախտման հետ կապ չունեցող ոչ էական նշանակություն ունեցող պատճառով ապրանքը չի ընդունվել,*
- *հաշվի առնելով, որ գտնվում ենք Հայաստանի պատմության մեջ աննախադեպ պատերազմական իրավիճակում, «Լուսակերտ» ՍՊԸ-ն հանդիսանում է հավի ձվի խոշոր արտադրող և կարող է բանակի համար մեծ անհրաժեշտություն լինել հավի ձվի պահանջը, խնդրում եմ մի կողմ թողնել ձևական նկատառումները և «Լուսակերտ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:*

12.10.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Կից ներկայացվում է 16.06.2020թ. թիվ 3959953783 հարկային հաշիվը, որով հաստատվում է, որ «Լուսակերտ» ՍՊ ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել է ապրանքը, սակայն ՀՀ ՊՆ-ն ոչ ապրանքն է ընդունել, ոչ էլ հարկային հաշիվն է հաստատել: Ինչպես հետևում է հարկային հաշվից այն էլեկտրոնային եղանակով հաստատված է միայն «Լուսակերտ» ՍՊ ընկերության կողմից, իսկ ՊՆ-ի կողմից էլեկտրոնային եղանակով չի հաստատվել: Նշվածը նույնպես վկայում է ապրանքը չընդունելու ՀՀ ՊՆ-ի ցանկության մասին: Բացի այդ ապրանքը փաստացի առաքվել է ՊՆ-ին, սակայն այն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ընդունվել 21.07.2020թ. գրությամբ նշված պատճառաբանությամբ: Իհարկե, պարզ է եղել, որ հարկային հաշիվը չհաստատելով ՀՀ ՊՆ-ն ի սկզբանե չի ցանկացել ընդունել ապրանքը:

Հայտնում եմ Ձեզ, որ «Լուսակերտ» ՍՊԸ-ն 25.12.2019թ. N ԳՀԱՊՁԲ-20-7/10-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի խախտում թույլ չի տվել, ճիշտ ժամանակին մատակարարել է պատշաճ որակի և քանակի ապրանքը՝ հավի ձուն, որը ՀՀ

պաշտպանության նախարարության կողմից չի ընդունվել 21.07.2020թ. գրությամբ նշված պատճառաբանությամբ և էլեկտրոնային հարկային հաշիվը չստորագրելով:

Պնդելով նախորդ առարկությունը, հաշվի առնելով, որ գտնվում ենք Հայաստանի պատմության մեջ աննախադեպ պատերազմական իրավիճակում, «Լուսակերտ» ՍՊԸ-ն հանդիսանում է հավկիթի խոշոր արտադրող և կարող է բանակի համար մեծ անհրաժեշտություն լինել հավկիթի պահանջը, խնդրում եմ մի կողմ թողնել ձևական նկատառումները և «Լուսակերտ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/220 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Լուսակերտ» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով, բացի այլ տեխնիկական բնութագրերի, սահմանվել է, որ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումն իրականացվում է ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ խմբաքանակն ընդունողի կողմից մատակարարին ներկայացված հայտ-պահանջարկի հիման վրա:

iv. Նույն հավելված 1-ով սահմանվել է նաև, որ մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

v. Պատվիրատուի և «Լուսակերտ» ՍՊԸ-ի միջև 09.04.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Համաձայնագրի թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է հունիս ամսից օգոստոս ամիսը ներառյալ՝ ըստ սահմանված քանակի: Հունիս ամսվա համար մատակարարման ենթակա ապրանքի քանակը նշվել է 120 000 հատ:

vii. Պատվիրատուի և «Լուսակերտ» ՍՊԸ-ի միջև 19.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին Համաձայնագիր, որի թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է հունիս ամսից օգոստոս ամիսը ներառյալ՝ ըստ սահմանված քանակի: Հունիս ամսվա համար մատակարարման ենթակա ապրանքի քանակը նշվել է 40 000 հատ:

viii. ՀՀ ՊՆ N զորամասի կողմից 16.06.2020թ.-ին կազմված թիվ 19 համարի արձանագրության համաձայն՝ 16.06.2020թ.-ին «Լուսակերտ» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում ՀՀ ՊՆ N զորամաս է մատակարարել 23000 հատ հավի ձու: Զորամասի ներքին ընդունող հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ վերը նշված խմբաքանակի արկղերը դրոշմված լինելու փոխարեն պիտակավորված են, ապրանքի վրա բացակայում է ՊՆ գրառումը, ինչպես նաև բացակայում է զինվորի բաժին վաճառքի ենթակա չէ գրառումն ու պահպանման պայմանները (-2-0°C - 90 օր):

Նույն արձանագրությամբ, հաշվի առնելով, որ նշված նյութական միջոցը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին, մատակարարված խմբաքանակը հետ է վերադարձվել Մասնակցին:

ix. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 16.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4296 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Լուսակերտ» ՍՊ ընկերության միջև 25.12.2019թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» գնման պայմանագրի և դրան կից՝ 19.06.2020թ. կնքված համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի հունիս ամսին պետք է մատակարարեր 40 000 «ձու, 01 կարգ (Հավի ձու 30-ական)», որը չի մատակարարել: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.09.2020թ.-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը (Համաձայնագիրը):

x. 16.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4296 ծանուցումը www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/10» ծածկագրի փոխարեն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14229-2020 գրությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Լուսակերտ» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով, բացի այլ տեխնիկական բնութագրերի, սահմանվել է, որ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումն իրականացվում է ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ **խմբաքանակն ընդունողի կողմից մատակարարին ներկայացված հայտ-պահանջարկի հիման վրա:** Ինչպես նաև՝ նույն հավելված 1-ով սահմանվել է նաև, որ մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

Պատվիրատուի և «Լուսակերտ» ՍՊԸ-ի միջև 09.04.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագրի

թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է հունիս ամսվա համար մատակարարման ենթակա ապրանքի քանակը՝ 120 000 հատ:

Պատվիրատուի և «Լուսակերտ» ՍՊԸ-ի միջև 19.06.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին համաձայնագրի թիվ 1 հավելվածի «գնման-ժամանակացույց» աղյուսակում ապրանքների մատակարարման քանակը նվազեցվել է և հունիս ամսվա համար մատակարարման ենթակա ապրանքի քանակը սահմանվել է 40 000 հատ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 16.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4296 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Լուսակերտ» ՍՊ ընկերության միջև 25.12.2019թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» գնման պայմանագրի և դրան կից՝ 19.06.2020թ. կնքված համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի հունիս ամսին պետք է մատակարարեր 40 000 «ձու, 01 կարգ (Հավի ձու 30-ական)», որը չի մատակարարել: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.09.2020թ.-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը (Համաձայնագիրը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/10-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով նշելով, որ մատակարարումն իրականացվելու է ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ **խմբաքանակն ընդունողի կողմից մատակարարին ներկայացված հայտ-պահանջարկի հիման վրա**, Պայմանագրի Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ կողմերի միջև 19.06.2020թ.-ին կնքված համաձայնագրի հավելված 1-ում նշված ապրանքի մատակարարման համար Պատվիրատուի խմբաքանակն ընդունողի կողմից Մասնակցին է ներկայացվել հայտ-պահանջարկ՝ մատակարարման ենթակա ապրանքների քանակների և ժամկետների վերաբերյալ, որն էլ սակայն Մասնակցի կողմից չի իրականացվել և որն էլ կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն

ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը, հարկ է համարում հավելել, որ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով առկա պատասխանատվության միջոցը կարող է միայն արձանագրվել՝ Պատվիրատուի խմբաքանակն ընդունողի կողմից մատակարարին ներկայացված հայտ-պահանջարկով սահմանված ժամկետից՝ 30 օրից ավել խախտման դեպքում, ինչպես սահմանվել է Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով, որն էլ հանդիսանալով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ, սույն գործով չի ապացուցվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14229-2020 գրությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/220 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**